

ԿԱՐԾԻՔ

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
 ՀԱՅՅՈՐԴ ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԸ ՆՈՐՄԱՏԻՎ
 ԿԱՐԳԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. պատմատեսական և
 իրավահամեմատական հետազոտություն» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԺԲ.00.01
 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
 ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավունքի ժամանակակից տեսության մեջ իրավունքի աղբյուրների շարքում սովորույթներից և ավանդույթներից, նորմատիվ իրավական ակտերից, միջազգային պայմանագրերից և իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներից, կրոնական նորմեր պարունակող աղբյուրներից ու իրավական դոկտրիններից բացի առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դատական նախադեպը: Վերջինս լայն կիրառում ունի անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում, սակայն մայրցամաքային Եվրոպայի երկրներում, այդ թվում՝ Հայաստանի իրավական համակարգում ևս նկատելի է դատական նախադեպի (դատական նորմաստեղծման) կիրառման շրջակների ընդլայնման միտումը: Այսօր իրավամբ կարելի է հավաստել, որ Հայաստանում ևս իսպառ վերացել են իրավաբան գիտնականների և պրակտիկ իրավաբանների այն կասկածներն ու վեճերը, որոնք մի քանի տարի առաջ ծավալվում էին դատական նախադեպերի կիրառման հնարավորության ու ծավալների վերաբերյալ: ՄԻԵԴ-ի, ՀՀ սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դիրքորոշումները (որոշումները) ոչ միայն հրապարակվում, այլև լայնորեն կիրառվում են ՀՀ մնացած դատարանների պրակտիկայում, այսինքն՝ դրանք ընդունվում են որպես կոնկրետ գործով արդարադատություն իրականացնելիս կայացված համապարտադիր (նորմատիվ) նշանակության ակտեր: Մյուս կողմից անհերքելի է, որ մեզանում դեռևս կարիք կա առավել չափով խորանալու դատական նախադեպի ինստիտուտի հիմնախնդիրների բացահայտման և կիրառման, դատական գործունեության բարելավման, դատարանների (և ոչ թե դատավորների, ինչպես նշում է ատենախոսը) հեղինակության առողջացման և նրանց նկատմամբ հարգանքի ու վստահության վերականգման մեջ: Այլ խոսքով՝ սույն հետազոտությունն արդիական է, նպատակ ունի լրացնել դատական նախադեպի վերաբերյալ հայերեն ուսումնասիրությունների

շարքը, տալ դրա համապարփակ բնութագիրը, հետագոտել դատական նախադեպի տեղն ու դերը իրավական կարգավորումների համակարգում, նաև վերլուծել դատական նախադեպի կառուցվածքն ու հիմնական հատկանիշները, ամենակարևորը՝ հիմնավորել դրա էլ ավելի լայն կիրառման անհրաժեշտությունը ՀՀ դատական համակարգում, այդ կապակցությամբ մշակել ու ներկայացնել ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը կատարելագործելու առաջարկներ:

Միանգամից նշենք, որ ատենախոսության հեղինակ Ա. Հակոբյանը լիարժեքորեն հասել է իր նպատակի իրագործմանը, նա նախևառաջ տվել է դատական նախադեպի ծագման և առաջացման պատմությունը (գենեզիսը) Հին Հռոմում և Ընդհանուր իրավունքի երկրներում, ապա վերլուծել է դրա պատմական զարգացման ընթացքը և, օգտագործելով այդ գիտելիքների պաշարը, ոչ միայն բացահայտել է այդ ինստիտուտի էությունը, կառուցվածքային տարրերը, մեկնաբանման եղանակները, դրա առաջընթաց զարգացումը, այլև գիտական պատշաճ մակարդակով քննարկել է դրա հետ կապված, բայց դեռևս չբացահայտված մի քանի, այն է՝ նույնանման կամ հակասական նախադեպային որոշումների առկայության դեպքում կիրառման ենթակա որոշման ընտրության, դատական նախադեպի հետադարձ ուժի և այլ հարցեր:

Ատենախոս Ա. Հակոբյանի աշխատանքում հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում դատական առանձնահատկությունների վերաբերող 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆը (եջեր 138-154), որտեղ նա լայնորեն վերլուծել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կոնկրետ գործերով կայացված նախադեպային որոշումները՝ կապված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման վաղեմության, սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու, ՀՀ սահմանադրական դատարանի՝ տուժանքի սահմանադրաիրավական կարգավորման անհրաժեշտության, ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները ՀՀ-ում կիրառելու պրակտիկայի հետ, ինչպես նաև առաջարկել է ՀՀ վերաքննիչ դատարանների որոշ որոշումներ, որոնք վերաբերում են տարբեր իրավանորմների և իրավական հարցերի շուրջ կատարած մեկնաբանություններն ու պարզաբանումները, վերլուծությունները (իրավական

դիրքորոշումները) և դիտարկել որպես նախադեպային, մեր կարծիքով իրավացիորեն, առաջարկում է նույն հարցերի առընչությամբ արտահայտված միմյանց հակասող նախադեպային բնույթ ունեցող իրավական դիրքորոշումների առկայության պայմաններում դրանցից որևէ մեկի ընտրության հարցը վերապահել գործը քննող դատարանին (ըստ ատենախոսի՝ դատավորին), պատճառաբանելով մյուս որոշումը չկիրառելու հանգամանքը:

Իրենցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և իրավաբանական հանրության կողմից քննարկման արժանի են նաև ատենախոսի կողմից պաշտպանության դրված 2 այլ դրույթներ, այն է՝ նախատեսել ընթացակարգ այլ դատարանների կողմից վարույթը կասեցնելու և վճռաբեկ դատարան դիմելու՝ գործի լուծման համար անհրաժեշտ մեկնաբանություն ստանալու նպատակով, ինչպես նաև դատական նախադեպ մատնանշելու դեպքում արագացված դատաքննություն կիրառելու հնարավորություն (147-547, սեղմագրի 10, 12-րդ էջեր):

Ա. Հակոբյանը հիմնավորել է իր հետազոտության գիտական նորույթը՝ որպես ՀՀ-ում տեղի ունեցած սահմանադրական և դատաիրավական համակարգերում կատարված ուսումնասիրություն, որպես տարբեր երկրներում կիրառվող դատական նախադեպային իրավահամեմատական վերլուծություն:

Ատենախոսը պահպանել է աշխատանքին ներկայացվող բոլոր կանոնները: Հեղինակային շարադրանքը և լեզուն գրագետ են, մատչելի և ընկալելի: Հայրենական և արտասահմանյան իրավաբանական հանդեսներում հրատարակած նրա 14 գիտական հոդվածներն արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթները, որոնք կարող են նաև հաջողությամբ օգտագործվել դատարանների աշխատանքում և «Պետության և իրավունքի տեսություն» ակադեմիական դասընթացը դասավանդելիս:

Ատենախոսությունն ունի գիտական-տեսական և կիրառական-գործնական նշանակություն, այն ինքնուրույն հետազոտություն է, ընտրված թեմայի համալիր վերլուծություն:

Միաժամանակ պետք է նշել, որ Ա. Հակոբյանի աշխատանքը, իհարկե՝ մեր կարծիքով՝ զերծ չէ նաև թերություններից և անճշտություններից, որոնք հանգում են հետևյալներին.

1. ընդհանուր առմամբ հաջողված սույն ատենախոսության վերտառությունը իրավագետների շրջանում կարող է նաև վիճարկելի լինել, քանի որ նախադեպը ոչ թե գտնվում է նորմատիվ կարգավորիչների համակարգում, ինչպես բխում է աշխատանքի վերտառությունից, այլ նորմատիվ իրավական ակտերին և նորմատիվ պայմանագրերին զուգահեռ համարվում է իրավունքի հիմնական աղբյուր: Մեր կարծիքով առավել ճիշտ կլիներ ընտրել «Դատական նախադեպը իրավական կարգավորիչների համակարգում» կամ «Դատական նախադեպը իրավունքի աղբյուրների համակարգում» արտահայտությունները: Այլ կերպ ասած՝ դատական նախադեպը իրավունքի աղբյուր է, բայց նորմատիվ կարգավորիչների բաղադրիչ չէ: Նշվածը ավելի քան թեման հաստատող կազմակերպության ոչ ճիշտ կողմնորոշումն է, քան՝ ատենախոսի:

2. ՄԻԵԴ-ի, ՀՀ սահմանադրական և Վճռաբեկ, վերաքննիչ ու ընդհանուր իրավասության դատարանների՝ նախադեպային որոշումների կայացման կամ կիրառման պրակտիկան օգտագործած ատենախոսը, մեր կարծիքով հանիրավի առանձնահատկ կերպով չի անդրադարձել Հայաստանի Հանրապետությունում նախադեպի արմատավորմանը նվիրված և այսպես կոչված՝ այդ հարցում հիմնարար նշանակություն ունեցող ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. փետրվարի 23-ի որոշման դրույթներին, ըստ որոնց՝ ա) դրանք բխում են սահմանադրական դատարանի լիազորությունից, հետևաբար՝ կրում են պաշտոնական բնույթ և սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ գործունեության համար, բ) համընդգրկուն են և վերաբերում են հանրային իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին գ) ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, դ) նպաստում են իրավակարգավորման անորոշության վերացմանը, իսկ որոշ դեպքերում՝ իրավակարգավորման ժամանակավոր միջոց են, ե) իրավակիրառական պրակտիկայում ապահովում են Սահմանադրության ամբողջական և միասնական ընկալումն ու օրինականությունը և վերջապես՝

զ) արտահայտում է ոչ միայն գործով ըստ էության կայացված, այլ նաև գործը վարույթ չընդունելու կամ գործով վարույթը կարճելու որոշումների մեջ: Հենց այս հիմնավորումներն էին, որ նպաստեցին ՀՀ սահմանադրական և Վճռաբեկ դատարանների լիազորությունների հստակ սահմանազատման շուրջ եղած վեճերի լուծմանը նախադեպային իրավակիրառման հարցում,

3. ատենախոսն առաջարկում է, որ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումների վրա կատարի նշագրում «Ն» - նախադեպ տառով, որի հետ հնարավոր չէ համաձայնվել, քանի որ լայն առումով կարող է եզրակացություն արվել, թե վճռաբեկ դատարանի մնացած որոշումները նախադեպային բնույթ չունեն: Հնարավոր չէ համաձայնվել ատենախոսի նաև այն առաջարկին, ըստ որի վերաքննիչ դատարանների օրինական ուժ ստացած որոշումները ևս պետք է համարել նախադեպային: Մինչդեռ նշված որոշումները վերջնական չեն, որովհետև կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Հակոբյանի «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում. պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» վերտառությամբ թեմայով ատենախոսական աշխատանքը խիստ արդիական է, ներառում է գիտական նորույթ, ունի գիտատեսական և գործնական էական նշանակություն ՀՀ իրավակիրառ պրակտիկայում և ակադեմիական դասավանդման բնագավառում, ամբողջական է, ինքնուրույն: Այն լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նախատեսված պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է ԺԲ.00.01 իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Քրախոս՝
Իրավաբանական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր



Ռ. Պետրոսյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Ռ. Պետրոսյանի ստորագրության իսկությամբ հաստատում եմ՝
Թիվ 063 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Ջ. Հայրապետյան